



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ
ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

25 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Վարտգեգ Գասպարիի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վարտգեգ Գասպարին (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Գենյա Պետրոսյան) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի ապրիլի 5-ին)՝ խնդրելով.

«որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180¹-րդ հոդվածի 15-րդ մասի (սանկցիան նախատեսող դրույթի մասով)՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 44-րդ, 60-րդ (1-4-րդ մասեր), 71-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի սանկցիայում օրենսդիրը սահմանել է նվազագույն և առավելագույն շեմեր, սակայն դատարանին չի ընձեռել նվազագույն պատժագումարի չափից (տուգանքի նշանակման չափից, այն է՝ 50.000 դրամից քիչ գումար) ավելի ցածր պատժի շեմ կիրառելու հնարավորություն, որի առկայությունը կապահովեր նույն օրենսգրքի 33-րդ հոդվածով նախատեսված՝ պատժաչափի որոշման ժամանակ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման պահանջը, որն էլ իր հերթին կապահովի հավասարության, համաչափության և արդարության սկզբունքների պահանջները:

Ըստ դիմողի՝ սահմանված տուգանքի նվազագույն շեմից ցածր չափով տուգանք նշանակելու հնարավորության բացակայությունը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության պահանջներին անհամապատասխանության խնդրին՝ վիճարկվող դրույթով այլընտրանքային պատասխանատվության միջոց նախատեսված չլինելու և տուգանքի նվազագույն չափի զգալի լինելու հանգամանքներով պայմանավորված:

3. Վարտգեղ Գասպարիի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողը միջնորդություն է ներկայացրել քննության առարկա գործով պետական տուրքի վճարումից իրեն ազատելու մասին՝ վկայակոչելով իր գույքային ծանր դրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180¹-րդ հոդվածի 15-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել դիմողի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

25 ապրիլի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-14